Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг., *под редакцией Армана Киракосяна, Е., изд-во “Тигран Мец”, 2010, 332 с.*

Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1946 թթ. դիվանագիտական փաստաթղթերում, *Արման Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., «Տիգրան Մեծ» հրատ., 2010, 332 էջ:*



Հայտնի պատմաբան և դիվանագետ Արման Կիրակոսյանի գիտական հետազոտությունների գերակա ուղղությունը Հայկական հարցի պատմությունն է: Նրա գրչին պատկանող մի շարք հիմնարար աշխատություններում լուսաբանվել են Հայկական հարցի դիվանագիտական պատմության տարբեր տեսանկյունները: Իր նոր աշխատություն գիրք-ժողովածուում Կիրակոսյանը ներկայացնում է տակավին համակողմանի չուսումնասիրված խորհրդա-թուրքական հարաբերությունների այն ժամանակափուլը, երբ 1945 թ. մարտին, որպես Թուրքիայի հետ պայմանագրի ստորագրման նախապայմաններից մեկը, խորհրդային կառավարությունը հանդես եկավ Կարսի և Արդահանի մարզերը Խորհրդային Միությանը վերադարձնելու առաջարկությամբ: Չնայած առատ են հրապարակումները, գրում է ժողովածուի առաջաբանի հեղինակը, սակայն դրանցում Հայկական հարցի և խորհրդա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ չկա մի ամբողջական գործ, որը համակողմանի արտացոլեր հիմնահարցը: Ա. Կիրակոսյանի «Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1946 թթ. դիվանագիտական փաստաթղթերում» աշխատությունը կոչված է լրացնելու այդ բացը:

Ժողովածուն բաղկացած է առաջաբանից և երկու բաժնից: Ժողովածուի առաջին բաժնում և առաջին անգամ հրատարակվում է «Թուրքիայի կողմից հայկական տարածքների զավթումը» ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի N «410 հատուկ նշանակության» գործը: Վերջինս ընդգրկում է 473 թերթից բաղկացած 19 փաստաթղթեր՝ իրենց հավելվածներով: Ահա դրանց ոչ լրիվ ցանկը՝ Հայկական հարցի համառոտ պատմության վերաբերյալ հուշագիրը, ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Ի. Քավթարաձեի նամակը Հայկական ԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ս. Կարապետյանին, վերջինիս զեկուցագիրը հայկական այն տարածքների մասին, որ 1921 թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական պայմանագրով անցել են Թուրքիային, ինչպես նաև հնարավորություն ստեղծվելու պայմաններում արտասահմանից հարազատ բնակատեղիներ հայերի վերադարձի մասին, ՀԽՍՀ արտաքին գործերի ժողկոմի տեղեկանքը այն նամակների, հեռագրերի վերաբերյալ, որ արտասահմանի հայկական կազմակերպությունները հղում են մեծ տերություններին և Միացյալ ազգերի կոնգրեսներին՝ Թուրքիայի զավթած հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու, Կարսի և Արդահանի շրջաններում հանրաքվե անցկացնելու, օտարերկրյա մամուլի և արտասահմանյան գործիչների

արձագանքների մասին, Թուրքիայի պրեմիեր-մինիստր Սարաջօղլուի հայտարարությունը, Ֆրանսիայի հայկական համայնքի՝ դաշնակից տերությունների արտաքին գործերի նախարարներին հղած հուշագիրն ու բանաձևը, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի նամակը դաշնակից տերությունների գերագույն խորհրդի նախագահին, Առաջին աշխարհամարտի ընթացքում պետական և հասարակական գործիչների պաշտոնական հայտարարություններից ու նամակներից քաղվածքները, Սան-Ֆրանցիսկոյում ԽՍՀՄ Գլխավոր հյուպատոսությունից և ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության Մերձավորարևելյան բաժնից ստացված նյութերը և այլն:

Ժողովածուի երկրորդ բաժնի՝ «ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Թուրքիայի դիվանագիտական փաստաթղթերը և Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսի նյութերը» ժամանակագրական կարգով ներառում են 1945 թ. մարտից մինչև 1946 թ. ապրիլն ընկած ժամանակշրջանի վերաբերյալ 27 դիվանագիտական փաստաթղթեր: Դրանցից առավել հիշատակության են արժանի 1945 թ. հունիսի 7-ին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Սարպերի՝ Մոլոտովի հետ հանդիպման մասին հեռագիրը, հունիսի 7-ին և 18-ին Սարպերի և Մոլոտովի հանդիպման վերաբերյալ Մոլոտովի օրագրից հատվածը, 1960 թ. Վաշինգտոնում հրատարակված ժողովածուում «ԱՄՆ-ի միջազգային հարաբերությունները» բնութագրող 11 փաստաթղթերը, 1945 թ. հունիսի 18-ից հուլիսի 13-ն ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ-ի պետական քարտուղարի պաշտոնակատարի՝ բրիտանական և թուրքական դիվանագետների հետ հարցազրույցների արձանագրությունները, Անկարայում, Մոսկվայում և Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպանների նամակագրությունը Պետական դեպարտամենտի հետ, «Թուրքիայի հետ հարաբերություններում Միացյալ Նահանգների քաղաքականությունը» ներկայացնող Պետդեպարտամենտի զեկույցը, խորհրդա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Բեռլինի կոնֆերանսի նյութերը, Բրիտանական Ֆորին օֆիսի հետազոտական դեպարտամենտի 1945 թ. հոկտեմբերի 4-ի վերլուծական տեղեկանքները թուրքական տարածքների՝ հայկական պահանջների նկատմամբ և 1946 թ. ապրիլին 4-ի՝ թուրքական տարածքների նկատմամբ հայկական և վրացական պահանջները, ԱՄՆ-ի պետական քարտուղար Բիրնսի՝ Թուրքիայում իր երկրի դեսպան Վիլսոնին և պետքարտուղարի տեղակալ Աչեսոնին հղած 1946 թ. հունվարի 2-ի և 18-ի հեռագրերը, Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Վիլսոնի՝ 1946 թ. հունվարի 3-ի հեռագրերը պետքարտուղարին, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Բեվինի նամակը բրիտանական խորհրդարանի անդամ Դրեյբերգին 1946 թ. մարտի 23-ին և «Կարսի պայմանագրի մասին» Ֆորին օֆիսի՝ 1946 թ. հունվարի 31-ի վերլուծական տեղեկանքը և այլ նյութեր:

Ժողովածուի հեղինակը խորհրդա-թուրքական հարաբերությունների պատմությունը բաժանում է երեք փուլի: Ըստ Կիրակոսյանի, առաջին փուլն ընդգրկում է խորհրդա-թուրքական հարաբերությունների սկզբնավորումից մինչև 1930-ական թվականների երկրորդ կեսը, որը բնորոշվում է որպես «բարիդրացիական և բարեկամության» փուլ, որի հիմնադիրներն էին Խորհրդային Ռուսաստանի ղեկավար Վ. Ի. Լենինը և Թուրքիայի Հանրապետության ստեղծող Քեմալ Մուստաֆա Աթաթուրքը:

Երկրորդ փուլը՝ 1930-ական թթ. վերջից մինչև 1960-ական թթ. սկիզբը, բնորոշվում է որպես «վստահության ճգնաժամի» և միջպետական հարաբերությունների լարվածության ժամանակաշրջան:

Երրորդ փուլն սկսվում է 1960-ական թվականների սկզբից և տևում մինչև ԽՍՀՄ-ի կազմալուծումը:

Ժողովածուի պատմաքննական առաջաբանում Կիրակոսյանը ցույց է տալիս, որ ռուս-թուրքական և խորհրդա-թուրքական հարաբերությունները սերտորեն միահյուսված են XIX դարավերջի և XX դարի հայոց պատմության հետ: Փոխկապակցված փաստերի տրամաբանությունն ընթերցողի մեջ կարծիք է ձևավորում, որ ռուսական ցարիզմի հայկական քաղաքականությունն աննշան փոխակերպումներով շարունակել են Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր և Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունները, որոնց գործելակերպում անթաքույց է եղել բացահայտ հակահայկականությունը:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի Հանրապետության ժամանակավոր կառավարությունը շարունակեց պատերազմը մինչև հաղթական ավարտի հասցնելու ցարական վարչակարգի քաղաքականությունը: Ժամանակավոր կառավարությունը որդեգրեց նաև Արևմտյան Հայաստանից գրավված տարածքների կառավարումը: Բռնագաղթած և տարագրված արևմտահայերն իրավունք ստացան վերադառնալ իրենց տները: Նրանց դրությունը, սակայն, սկսեց կտրուկ վատանալ, երբ հեղափոխական տրամադրություններով համակված զինվորներն սկսեցին թողնել ճակատը և բռնել տունդարձի ճանապարհը:

Ահա այսպիսի պայմաններում, Ռուսաստանում իշխանության եկած խորհրդային կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 29-ին հրապարակեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որը միայն խոսքով էր ճանաչում արևմտահայության ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն: Դեկրետի իրականացումը դյուրին չէր. այն կախված էր հայկական կազմակեպությունների և ազգային ուժերի համախմբումից, տարածաշրջանում կարգ ու կանոն հաստատելու համար բոլոր հնարավորությունների ռազմականացումից, միլիցիայի ստեղծումից, ռուսական բանակի զորամասերի օգտագործումից: Հատկապես ռուսական զորքի օգտագործումը չափազանց կարևոր էր: 1918 թ. փետրվարի 1-ին «Արմյանսկի վեստնիկ» պարբերականում հրապարակած «Խորհրդային դեկրետը Հայաստանի անկախության մասին» խորագրով իր հոդվածում միջնադարագետ, պատմաբան և հայտնի հրապարակախոս Ալեքսեյ Ջիվելեգովը (որը նաև պարբերականի խմբագիրն էր), մասնավորապես գրել է. «…Եթե խորհրդային կառավարությունն իրոք ցանկանում է Հայաստանին տալ անկախություն, նա պետք է մի բան ընդունի՝ փոքր ժողովուրդներն իրենց անկախությունը երբեք կամ գոնե երբեք սեփական ուժերով չեն նվաճել. նրանց միշտ օգնել են ուժեղ ժողովուրդները … Իսկ Ռուսաստանի օգնությունը կարող է արտահայտվել միայն նրանում, որ Հայաստանում թողնվի ռուսական բանակի թեկուզ մի մասը … Սակայն դեկրետը և նրա շուրջ մեկնաբանությունները կազմված են այնպես, որ եթե այն բոլորը, ինչ պարունակվում է դրանցում, Աստված մի արասցե, գործնականում տեղի ունենա, հայ ժողովուրդը կդառնա ամենածանր դժբախտությունների զոհ: Թող պարոններ Լենինը, Տրոցկին, Ջուղաշվիլին և նրանց ընկերները այդ մասին մտածեն լրջորեն: Տակավին ժամանակ կա այդ մասին խոսելու» (էջ 14):

Ամեն ինչ տեղի ունեցավ այնպես, ինչպես կանխատեսում էր Ջիվելեգովը: Արևմտյան Հայաստանից զորքերի դուրս բերումը էլ ավելի ծանրացրեց երկրում եղած հայերի կացությունը: 1918 թ. փետրվարին թուրքական զորքերը հարձակման անցան ամբողջ ճակատով և նորից տի- րացան Արևմտյան Հայաստանին: Խորհրդային Ռուսաստանը հրաժար- վեց Առաջին աշխարհամարտին հետագա մասնակցությունից և մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում անջատ հաշտություն ստորագրեց Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի,

Բուլղարիայի և Թուրքիայի հետ: Լրացուցիչ ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրով Թուրքիային անցան Արևմտյան Հայաստանը, Կարսի և Արդահանի մարզերը: Թուրքական վերջնագրի ճնշման տակ Անդրկովկասյան սեյմը հարկադրված ընդունեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի առաջադրած պայմանները, սակայն, չբավարարվելով դրանով, Թուրքիան խախտեց խաղաղության պայմանները և սկսեց ռազմական գործողությունները: 1918 թ. մայիսին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը՝ իրական սպառնալիք ստեղծելով Երևանի գրավման համար: Միաժամանակ, Թուրքիան պահանջեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ճանաչել տարածքային իր նոր նվաճումները: Մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը հայտարարեց իր ինքնալուծարման մասին: Նույն օրը իրեն անկախ հանրապետություն հայտարարեց Վրաստանը, 27-ին՝ Ադրբեջանը, իսկ 28-ին՝ Հայաստանը:

Լինելով թույլ և չստանալով ոչ մի օգնություն Խորհրդային Ռուսաստանից ու արևմտյան պետություններից՝ Հայաստանի Հանրապետությունն ստիպված հունիսի 4-ին, Բաթումում խաղաղության և բարեկամության մասին պայմանագիր ստորագրեց Թուրքիայի հետ, որով Հայաստանի Հանրապետության տարածքը կրճատվեց՝ հասնելով 10 հազար քառ. կիլոմետրի: Բացի Արևմտյան Հայաստանից, Թուրքիան ստացավ նաև Կարսը, Արդահանը, Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանի մարզը, Ալեքսանդրապոլի և Երևանի շրջանների մի մասը:

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, 1918 թ. հոկտեմբերի 30-ին, հունական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում Անտանտի տերությունների և Թուրքիայի միջև կնքվեց զինադադար, որը նախատեսում էր թուրքական զորքերը դուրս բերել նաև Անդրկովկասից և Կիլիկիայից: Թուրքական զորքերն անհապաղ հեռացան Կարսի մարզից, և, փաստորեն, վերականգնվեց 1914 թ. նախապատերազմյան սահմանը:

Թուրքիայի պարտությունը հնարավորություն տվեց ոչ թուրք ժողովուրդներին ազատագրվել օսմանյան լծից և ստեղծել իրենց անկախ պետությունները: Ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի և Անտանտի երկրների քաղաքականության դեմ հանդես եկավ թուրքական ազգային բուրժուազիան՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, որի անունով էլ շարժումը կոչվեց քեմալական: Քեմալականները 1919 թ. հուլիս-օգոստոսին Էրզրումում և սեպտեմբերին Սեբաստիայում տեղի ունեցած կոնգրեսներում ոչ միայն մերժեցին հայկական նոր պետության ստեղծման գաղափարը, այլև հայտարարեցին, որ որ ոչ մի թիզ չեն զիջի հայերին:

Քեմալական շարժման աճող թափին մեծ լիցք է տալիս Խորհրդային Ռուսաստանը, որն այն դիտելով որպես հակաիմպերիալիստական հեղափոխություն՝ նորաստեղծ Թուրքիային անհատույց տրամադրում է զենք, զինամթերք և 10 միլիոն ռուբլի՝ ոսկով: Ստանալով այդ օգնությունը և օգտվելով Անդրկովկասում ստեղծված իր համար բարենպաստ դրությունից (Ադրբեջանն արդեն խորհրդայնացվել էր)՝ քեմալականները 1920 թ. սեպտեմբերի վերջին ներխուժեցին Հայաստանի Հանրապետության տարածք՝ այդ ասպատակությունը հայտարարելով որպես պատերազմ Անտանտի դեմ:

1920 թ. հայ-թուրքական պատերազմում քեմալականները մի քանի ամսում ոչնչացրին շուրջ 200 հազար հայ խաղաղ բնակիչ՝ շարունակելով հայոց ցեղասպանության երիտթուրքական քաղաքականությունը: Պատերազմում պարտություն կրելով՝ Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքեց Թուրքիայի հետ Ալեքսանդրապոլի

ստրկացուցիչ պայմանագիրը, ըստ որի, Թուրքիան Հայաստանի Հանրապետությունից զավթեց Կարսն ու Արդահանը, Կաղզվանի, Օլթիի, Արդվինի օկրուգները, Սուրմալուի գավառը՝ Իգդիր քաղաքով, հայ ժողովրդի խորհրդանիշ Արարատ լեռը ներառյալ: Այդ պայմանագրով Թուրքիան Հայաստանից անջատեց նաև Նախիջևանի, Շարուրի և Շահթախթի շրջանները: Այդ պայմանագիրը իրավական ուժ չուներ, քանի որ Հայաստանի Հանրապետությունում հաստատվել էր խորհրդային իշխանություն: Ահա այդպիսի պայմաններում է, որ Մոսկվայի՝ խորհրդա-թուրքական 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին տեղի ունեցած կոնֆերանսի վերջին օրը՝ մարտի 16-ին, Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի կառավարական պատվիրակությունները ստորագրեցին «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Դա «Նոր Թուրքիայի» դիվանագիտական հաղթանակն էր, քանի որ քեմալականներն իրենց «Ազգային ուխտի» մեջ Արևմտյան Հայաստանն արդեն հայտարարել էին թուրքական պետության անբաժան մասը: Մոսկվայի պայմանագիրը ոչ միայն ամրագրեց այդ իրողությունը, այլև վավերացրեց թուրք-հայկական պատերազմի ժամանակ թուրքերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքների զավ- թումը: Թուրքիային հանձնվեցին Կարսի մարզը, Սուրմալուի գավառը, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի օկրուգները և ուրիշ տարածքներ (տե՛ս էջ 23): Խորհրդա-թուրքական 1921 թ. մարտյան պայմանագրից հետո, գրեթե քառորդ դար Հայկական հարցը դուրս մնաց դիվանագիտական քննարկումներից: Այն դիվանագիտական խոսակցության առարկա դար-ձավ Հայրենական պատերազմից հետո, 1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը Բեռլինում (Պոտսդամում) տեղի ունեցած երեք մեծ տերությունների ղեկավարների խորհրդաժողովում: Ժողովի պաշտոնական բացումից մեկ օր առաջ, հուլիսի 16-ին, ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մոլոտովի և Անգլիայի արտաքին գործերի նախարար Ա. Իդենի միջև տեղի է ունենում զրույց, որի ժամանակ Մոլոտովը հատկապես ընդգծում է, որ 1921 թ. թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից և նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Հայերը Խորհրդային Միությունում իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառով էլ խորհրդրդային կառավարությունը բարձրացնում է Խորհրդային Միությանը օրինաբար պատկանող տարածքներն իրեն վերադարձնելու հարցը (տե՛ս էջ 42):

Այնուհետև հայկական հողերի հարցին Բեռլինի համաժողովն անդրադարձավ հուլիսի 22-ին: Այստեղ ևս Մոլոտովը խոսում է ԽՍՀՄ պահանջատիրության մասին: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, հարցի քննարկումը ոչ մի էական արդյունք չի արձանագրում, քանզի ԱՄՆ-ը Թուրքիային արդեն վերցրել էր իր հովանավորության ներքո: «Սառը պատերազմի» քաղաքականությունը, որը բացահայտորեն հռչակվեց 1946 թ. մարտի 5-ին ԱՄՆ-ի Ֆուլտոն քաղաքում Ու. Չերչիլի հայտնի ճառից հետո, էլ ավելի նպաստեց Արևմուտքի և Թուրքիայի դաշնակցային հարաբերությունների ամրապնդմանը, բնականաբար, դիվանագիտական շրջանառությունից իսպառ հանելով Թուրքիայից Խորհրդային Միությանը «հայկական հողերի» միացման հարցը: Ավելին, Ստալինի մահից շուրջ 3 ամիս անց, 1953 թ. մայիսի 30-ին, խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջներ չունի Թուրքիայից: Խորհրդային Միությունը այդ քաղաքականությանը հավատարիմ մնաց մինչև իր վախճանը:

Ժողովածուի խմբագիրը առաջնորդողի 49-րդ էջում նկատում է, որ, չնայած Խորհրդային Հայաստանի պատմագիտությունը մասամբ ազատվել էր անցյալի դոգմատիկ կաղապարներից, Հայկական հարցի խնդիրները, հայ-թուրքական հարաբերությունները, թուրքական պատմագրության կեղծարարությունը լուսաբանել է խորհրդային

գաղափարախոսության և արտաքին քաղաքականության թույլատրելիության շրջանակներում՝ «Բուրժուական գաղափարախոսության և պատմագրության դեմ պայքարի» համատեքստում (էջ 42):

Համաձայնելով հեղինակի կարծիքին՝ միայն ուզում ենք ավելացնել, որ խորհրդային համակարգի քայքայումից հետո էլ, հայ պատմահասարակագիտական միտքը չկարողացավ և չի կարողանում ստեղծել կամ կազմավորել ազգային հավաքական մտածողության կայուն ու հիմնարար այնպիսի հենք, որը հնարավորություն տար թուլացնել միջազգային դիվանագիտության օգնությամբ Հայկական հարցը լուծելու՝ տակավին կենսունակ ու համառող գաղափարախոսության իներցիայի ուժը: Համաձայնենք մի շատ պարզ ճշմարտության մեջ. այսօր ոչ միայն մեր պատմագիտության, այլև ամբողջ հասարակագիտության զարգացման գործում չկա պետական կանոնակարգված քաղաքականություն:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն. Բ.
Պատմական գիտությունների դոկտոր